ՓԱՐԻԶԻ ՍԵՆՏ-ՇԱՊԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Փարիզի Սենտ-Շապելի տաճարը ֆրանսիական գոթական ճարտարապետության և զարդարվեստի աչքի ընկնող նմուշներից մեկն է։ Նա հատկապես հայտնի է իր սքանչելի վիտրաժներով։

Եկեղեցու արևմտյան ճակատի երկրորդ հարկի շքամուտքը հայ արվեստաբանների ուշադրությունը գրավեց և բանավեճեր առաջացրեց 1950-ական թթ. վերջին և 1960-ական թթ. սկզբին։ Բանավեճերի առարկա

Սենտ-Շապելի հարթաքանդակներից մեկը։

հանդիսացան շքամուտքի ստորին աջ կողմում գտնվող երեք զարդաքանդակները, որոնց վրա պատկերված է ջրհեղեղի պատմությունը՝ սոյան տապանով և եռահարկ, ոտոնդաձև մի շինությամբ։ Երեք պատկերները վերցված են քառատերև շրջանակների մեջ (մի ձև, որ շատ հաճախ է հանդիպում գոթական հուշարձանների, օրինակ՝ Փարիզի Աստվածամոր տաճարի վրա)[1]։ Յուրաքանչյուր հարթաքանդակը պատկերում է Նոյի պատմության մի դրվագ։ Երեք դեպքերում էլ Նոյան տապանի վրա երևվում է նույն մոտիվը՝ եռահարկ ոտոնդաձև մի շենք։

Այս հարթաքանդակների մասին առաջին անգամ ճարտարապետ Տիրան Մարությանը գրեց «Գրական թերթում» 1959 թ.[2], Հեղինակը նույն դրույթները վերարտահայտեց և զարգացրեց իր «Զվարթնոց...» գրքի «Փարիզի հարթաքանդակը որպես Զվարթնոցի մոդել» վերնագրով գլխում[3]։ Տ. Մարությանի առաջքաշած հիմնական թեզերը հետևյալն էին։ Արարատ լեռան հետ կապված Նոյի բիբլիական լեգենդը պատկերող զարդաքանդակներում հկեղեցական շենքը, որ պսակում է Նոյան տապանը, չի կարող լինել այլ բան, քան Արարատյան դաշտում մինչև X դարը կանգուն մնացած Զվարթնոց տաճարի վերարտադրությունը։ Տ. Մարությանը գտնում է նաև, որ այս քանդակների հեղինակը պետք է լիներ հռչակված ու Եվրոպա գնացած հայ վարպետներից մեկը։ Ինչ վերաբերում է այս տաճարի պատկերի փոխանցման ուղուն՝ Հայաստանից Ֆրանսիա, ապա Տ. Մարությանը, նկատի ունենալով, որ Սենտ-Շապելը կառուցվել է XIII դարում, երբ Զվարթնոցը և զվարթնոցանման Գագկաշենը վաղուց կործանվել էին, ենթադրում է, որ տաճարի պատկերը կարող էր Փարիզ հասնել այժմ անհետացած որևէ մոդելի կամ մանրանկարի միջոցով։ Միանգամայն համոզված լինելով, որ Սենտ-Շապելի արևմտյան ճակատի հարթաքանդակները վերարտադրում են Զվարթնոցի ձևերը, վերոհիշյալ թեզերի հեղինակը հանգում է որոշ եզրակացությունների Զվարթնոցի վերակազմության խնդիրների վերաբերյալ։

Տիրան Մարությանի առաջարկած դրույթներին հակադրվում է ճարտարապետ և արվեստաբան Ստեփան Մնացականյանը «Սովետական արվեստ» և ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հանդեսներում լույս ընծայած իր հոդվածներով[4]։ Նա հիշեցնում է, որ եռաստիճան, ոտոնդաձև հորինվածքը գոյություն ուներ արդեն անտիկ հռոմեական ճարտարապետության մեջ և հանդիպում է հետագայում ամբողջ քրիստոնեական աշխարհում՝ թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում։ Այս հորինվածքը, նկատում է Ս. Մնացականյանը, առանձնապես տարածվեց Եվրոպայում խաչակրաց արշավանքների ժամանակ, հավանարար Երուսաղեմի Քրիստոսի գերեզմանի օրինակով։ Այնուհետև Ս. Մնացականյանն

---

[1] Այս երկրաչափական ձևը եզերում է նաև Ս.-Շապելի շքամուտքի գետնախարիսխի բոլոր մյուս զարդաքանդակները և թիչ հավանական է թվում, որ նա կապված լինի տապանի վրա քանդակված շինության հատակագծի հետ։

[2] «Գրական թերթ», 3 ապրիլի, 1959։

[3] Տ. Մարության, Զվարթնոց և զվարթնոցանման տաճարներ, Երևան, 1963։

[4] «Սովետական արվեստ», 1959, № 7, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 2, էջ 95—100։

անդրադառնում է Սենտ-Շապելի՝ Նոյան տապանը պատկերող հարթաքանդակների տեխնիկային և նկատում, որ այստեղ օգտագործված է հեռանկարի հնարը։ Նկատելով այն հանգամանքից, որ հեռանկարային օրենքները միջնադարում դեռ անհայտ էին, նա եզրակացնում է, որ այս պատկերները XIII դարին՝ այսինքն Սենտ-Շապելի կառուցման շրջանին չեն կարող պատկանել, այլ քանդակվել են XVII կամ XIX դդ., մի ժամանակ, «երբ ոչ մի խոսք չէր կարող լինել Գագկաշենի (կամ Զվարթնոցի) վերարտադրության մասին»։

Միջնադարյան հայ արվեստի մեկ այլ հայտնի ուսումնասիրող՝ Հովհաննես Խալփախչյանը ևս անդրադարձել է Սենտ-Շապելի հարթաքանդակների հարցին (1962 և 1963 թթ. հրատարակված իր երկու հոդվածներում)։ Նա հայտնում է այն կարծիքը, որ երեք հարթաքանդակները հանդիսանում են XIX դարում կատարված պատճեններ, որոնց հեղինակը հավատարիմ է մնացել միջնադարյան ձևերին, դոնե տապանի և բոլորակ շինության հարցում։ Նա գտնում է, որ բազմահարկ շենքը պետք է մեկնաբանվի «որպես մարմնացում Արարատյան լեռան», սակայն Զվարթնոցը չի համարում Սենտ-Շապելի վրա պատկերված շենքի նախատիպը։ Ելնելով քանդակված պատկերի և Գագկաշենի եկեղեցու նմանօրինակի «գրեթե լրիվ նույնականությունից», նա եզրակացնում է, որ «քամուտքի վրա «անկասկած, պատկերված է Գագկաշեն եկեղեցին, որքանով որ նա, թեկուզև վնասված վիճակում, XIII դարում դեռ գոյություն ուներ»[7]։ Հ. Խալփախչյանը միանում է Տ. Մարությանի այն կարծիքին, որի համաձայն միայն հայ վարպետները կարող էին լինել Ս.-Շապելի զարդաքանդակների հեղինակները։

Առանց բանավեճին մասնակցելու, հանգուցյալ Ֆրանսահայ ճարտարապետ Էդուարդ Ութուջյանը հայ ճարտարապետությանը նվիրված հոդվածներից մեկում հակիրճ ձևով իր կարծիքը հայտնեց Սենտ-Շապելի հարթաքանդակների մասին։ Նա պարզապես հրատարակեց երեք պատկերներից մեկի լուսանկարը, որին կցեց հետևյալ բավականին տարօրինակ մակագրությունը. «Սենտ-Շապելի շքամուտքը, որտեղ պատկերված է Զվարթնոցի եկեղեցին (?), այն նույն տեղում, որտեղ նա գտնվում է Արարատ լեռան դիմաց, Նոյան տապանի հետ մեկտեղ»[8]։

Ինչպես երևում է Սենտ-Շապելի քանդակների հարցին վերաբերող հոդվածների հակիրճ ակնարկից, բանավեճի կենտրոնական տարրերից մեկը հանդիսանում է երեք զարդաքանդակների կատարման ժամանակը։ Ըստ Տ. Մարությանի, Սենտ-Շապելի քանդակները կատարվել են տաճարի կառուցմանը զուգընթաց, մինչդեռ Ս. Մնացականյանը դրանք համարում է ավելի ուշ վերանորոգումների արդյունք, իսկ Հ. Խալփախչյանի կարծիքով քանդակները վերականգնվել են XIX դարում, բայց պահպանում են նախօրինակների թեմատիկան։

Բնականաբար, հարց է առաջանում. ի՞նչ տեղեկություններ կարող ենք քաղել այս կապակցությամբ ֆրանսիական աղբյուրներից։

Անցյալ դարում, Սենտ-Շապելի հիմնական վերանորոգման ժամանակ և դրանից հետո, մի շարք մենագրություններ գրվեցին, նվիրված տաճարի պատմությանը և նրա նկարագրությանը, բոլորն էլ հիմնված որոշ հին աղբյուրների վրա[9]։ Այս աղբյուրների շնորհիվ մենք կարող ենք համառոտակի շարադրել հուշարձանի պատմությունը։

1237 թ. բյուզանդական կայսրը Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ին վաճառում է մինչև այդ Կոստանդնուպոլսում պահվող թանկագին քրիստոնեական մասունքներ։ 1241 թ. դրանք բերվում են Փարիզ, և Լյուդովիկոս IX-ը որոշում է մասունքները պահելու համար նրանց արժանի մի տաճար կառուցել իր պալատին կից։ 1241 թ. սկսվում են Սենտ-Շապելի կառուցման աշխատանքները, որ ավարտվում են 1248 թ.[10]։

Պատմական աղբյուրները մեզ տեղեկացնում են, որ Սենտ-Շապելի տաճարը ժամանակի ընթացքում հաճախ է վնասվել և ենթարկվել վերականգնումների։ Կառլոս VIII թագավորի օրոք, Սենտ-Շապելի արտակարգ վատ վիճակի հետևանքով ձեռնարկվեցին վերանորոգման աշ-

---

5 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 2, էջ 99։

6 «Սովետական Հայաստան», 1962, № 7։ «Декоративное искусство СССР», 1963, № 2

7 «Սովետական Հայաստան», 1962, № 7, էջ 34։

8 „Le monde souterrain", № 124 (1961), Paris, էջ 246։

9 S. J. Morand, Histoire de la Sainte-Chapelle royale du Palais, Paris, 1790; G. Dongois, Mémoires pour servir a l'histoire de la Sainte-Chapelle, manuscrit du XVIII s., Archives Nationales, Paris; M. Beguillet. Histoire de Paris, Description..., t. II, Paris, 1780.

10 R. Branner, St. Louis and the court style in gothic architecture, London, 1965, էջ 61 և 64։

խատանքներ, որոնք կատարվեցին 1485 թ.[11], 1630 թ. մեծ հրդեհից հետո տաճարի ծածկը փլվեց և երկրորդ հարկը վնասվեց։ 1793 թ. նոր կառավարության հրամանով քանդվեցին տաճարի վրա գտնվող, ֆեոդալիզմի և միապետության հետ առնչվող բոլոր նշանները (իսկ դրանց մեծ մասը գտնվում էր արևմտյան շքամուտքի վրա)[12]։ Այնուհետև եկեղեցին օգտագործվեց որպես ակումբի դահլիճ, ալյուրի ու արխիվների պահեստ։

Տաճարի վերանորոգման աշխատանքները սկսվեցին 1839 թ.։ Ճարտարապետ Լասյուսի ղեկավարությամբ քանդակագործ Ժոֆրուա Դրյոմը 1850-ական թթ. վերանորոգեց Սենտ-Շապելի քանդակները։ Վերանորոգման ժամանակակից և ավելի ուշ շրջանի հեղինակները կարևոր տեղեկություններ են տալիս մեզ հետաքրքրող պատկերների մասին։ Դրանցից հայտնի է դառնում, որ Սենտ-Շապելի արևմտյան շքամուտքի երկրորդ հարկում քանդակված տիմպանի պատկերները և ստորին հարթաքանդակները (որտեղ այժմ գտնվում է Նոյան տապանը և այլն) քանդվել էին հեղափոխության ժամանակ և «վերաստեղծվեցին» Ժ. Դրյոմի կողմից, ճարտարապետ Լասյուսի առաջարկած գծագրերի համաձայն[13]։

Հարց է առաջանում, թե ինչի՞ հիման վրա վերանորոգեցին շքամուտքի քանդակված դեկորը։ Ի՞ն էր շքամուտքի հին հարդարանքը, որը, փաստորեն, կործանվեց։ Մի խոսքով՝ արդյո՞ք միջնադարյան հարթաքանդակներն են վերարտադրված վերականգնողների կողմից, թե՞ ստեղծված է բոլորովին նոր կոմպոզիցիա։

Սորբոնի պրոֆեսոր Լուի Դրոդեքին Սենտ-Շապելի շքամուտքի գետնախարիսխի քանդակների մասին գրում է. «Այս ամենը ոճի առումով վերականգնվեց շատ ճիշտ ձևով, մի բան, որ կարող է ոչցելուին թյուրիմացության մեջ գցել, բայց պատկերների ընտրությունը և նրանց դասավորումը կատարվեցին խիստ կամայական ձևով[14]։

Ֆրանսիական աղբյուրներում չի պահպանվել ոչ մի հին նկար, որ մանրամասնորեն ցույց տար տաճարի արևմտյան ճակատի բաղկացուցիչ մասերը։ Սակայն նկարագրություններ կան, որոնցից մենք տեղեկանում ենք, թե ինչ պատկերներ էին քանդակված միջնադարում Սենտ-Շապելի շքամուտքի վրա։ Պարզվում է, որ արևմտյան ճակատի երկրորդ հարկի շքամուտքի գետնախարիսխի վրա քանդակված էին տարբեր մարդարևների պատմություններ, հիմնականում Հովնան մարգարեի պատմությունը[15], բայց ոչ մի խոսք չի ասված Նոյ նահապետի կամ նրա տապանի պատմության մասին։ Կարելի է, գուցե, մտածել, որ Սենտ-Շապելի հին նկարագրությունների հեղինակները, տեսնելով մարգարեներին նվիրված բազմաթիվ պատկերներ, ուշադրություն չեն դարձրել Նոյան տապանի վրա, կամ մոռացել են հիշատակել այն։ Հնարավոր է ենթադրել նաև, որ որոշ հեղինակների մոտ հիշատակված «դժվարիմաց հարթաքանդակներ» տերմինի տակ[16] պետք է հասկանալ Նոյան տապանը։ Համենայն դեպս, շքամուտքի գետնախարիսխի վիճակին վերաբերող գրվածքներում հաստատված է, որ սկզբնական քանդակներից գրեթե ոչ մի բան չէր մնացել 1793 թ. հետո։

Ելնելով այդ հանգամանքներից, կարելի է եզրակացնել, որ Նոյան տապանը պատկերող երեք հարթաքանդակները ստեղծվել են անցյալ դարում, Սենտ-Շապելի վերանորոգման ժամանակ, և որ նրանք չեն վերարտադրում միջնադարյան նախօրինակները։

Հայտնի է, որ տաճարի երկրորդ հարկի շքամուտքի քանդակներում, նախկինում, ինչպես և այժմ, փառաբանվում էր Քրիստոսը, քանի որ քանդակված էին և վերականգնվեցին տիմպանի վրա «ահեղ դատաստանի» տեսարանը, իսկ դռան միջասյան վրա՝ Քրիստոսը[17]։ Ուստի

---

[11] L. Grodecki, La Sainte-Chapelle, Paris, 1975, էջ 8։

[12] Նույն տեղում, էջ 9։

[13] M. Calliat et M. de Guilhermy, La Sainte-Chapelle de Paris, Paris, 1857. M. de Guilhermy, Description de la Sainte-Chapelle, Paris, 1867, էջ 26։ H. Stein, Le Palais de Justice et la Sainte-Chapelle de Paris, Paris, 1912, էջ 196 և 200։ W. Rabaud, La Sainte-Chapelle. Guide historique, Paris, 1930, էջ 21։ F. Gebelin, La Sainte-Chapelle et la Conciergerie, Paris, 1931, էջ 26։

[14] L. Grodecki, նշվ. աշխ., էջ 20։

[15] S. J. Morand, նշվ. աշխ., էջ 31։ C. Desmaze, La Sainte-Chapelle du Palais..., Paris, 1872, էջ 48։ Abbé Lebeuf, Histoire de la ville de Paris, Paris, 1883, էջ 221։

[16] C. Desmaze, նշվ. աշխ., էջ 48։ Նոյ նահապետի պատմությունը՝ Աստվածաշնչի հանրամանաչ էպիզոդներից մեկը, չէր կարող իհարկե, անհասկանալի թվալ ֆրանսիական հեղինակներին։

[17] W. Rabaud. նշվ. աշխ., էջ 21։

զարմանալի չպիտք է թվա, որ քանդակագործ-վերականգնողը այս նույն հարկի շքամուտքի գետնախարիսխին, աշխարհի ստեղծման պատկերների թվում, քանդակեր Նոյան տապանը, որն իր խորհրդանշական իմաստով կապված է Քրիստոսի հետ։ Էմիլ Մալն, օրինակ, հետևյալ մեկնաբանությունն է տալիս. Նոյը խորհրդանշում է Քրիստոսին, իսկ Նոյան տապանը՝ Քրիստոսի եկեղեցին, ինչպես որ Նոյի տապանը փրկել է մարդկությունը հեղեղի ջրերից, այնպես էլ Քրիստոսի եկեղեցին պետք է փրկի մարդուն մկրտության ջրերի մեջ[18]։ Այս մեկնաբանության տրամաբանությամբ հնարավոր է ենթադրել, որ շքամուտքի գետնախարսխի վրա քանդակված է մարդկության փրկության ուղին հիշեցնող, Երուսաղեմի Քրիստոսի գերեզմանի խորհրդանշական պատկերը՝ ռոտոնդաձև. եռահարկ կառուցվածքի ձևով[19]։ Ճիշտ է, այդ գերեզմանի ստույգ սկզբնական ճարտարապետական հորինվածքը անցյալ դարում անհայտ էր (Հ. Վենսանը և Մ. Աբելը գերեզմանի ռոտոնդաձև հորինվածքի վերաբերյալ իրենց ուսումնասիրությունների արդյունքները հրապարակեցին միայն 1914 թ.)[20], սակայն պետք է ենթադրել, որ Սենտ-Շապելի վերականգնողները քաջատեղյակ էին միջնադարյան նկարչությանը և զարդակիրառական արվեստին և որ մանրանկարներից ու փղոսկրյա կազմերից նրանց հայտնի էին գերեզմանի այցելության բազմաթիվ պատկերները, որտեղ գերեզմանը բազմահարկ ու աշտարակաձև է, երբեմն էլ՝ ռոտոնդաձև։



Սեն-Սավեն վանքի որմնանկար, XI—XII դդ.։

մեկնաբանությունն է տալիս. Նոյը խորհրդանշում է Քրիստոսին, իսկ Նոյան տապանը՝ Քրիստոսի եկեղեցին, ինչպես որ Նոյի տապանը փրկել է մարդկությունը հեղեղի ջրերից, այնպես էլ Քրիստոսի եկեղեցին պետք է փրկի մարդուն մկրտության ջրերի մեջ[18]։ Այս մեկնաբանության տրամաբանությամբ հնարավոր է ենթադրել, որ շքամուտքի գետնախարսխի վրա քանդակված է մարդկության փրկության ուղին հիշեցնող, Երուսաղեմի Քրիստոսի գերեզմանի խորհրդանշական պատկերը՝ ռոտոնդաձև. եռահարկ կառուցվածքի ձևով[19]։ Ճիշտ է, այդ գերեզմանի ստույգ սկզբնական ճարտարապետական հորինվածքը անցյալ դարում անհայտ

Ի վերջո նշենք, որ Սենտ-Շապել տաճարի վրա քանդակված տապանին նմանվում է մեկ ուրիշ տապան, որը նկարված է Սեն-Սավեն վանքում, եկեղեցու թաղի որմնանկարներում (XI—XII դդ.)[21]։ Որմնանկարի նավի վրա նկարված եռահարկ «շինության» հարկերը կազմված են սյուների վրա հենված կամարաշարքերից, և յուրաքանչյուր հարկը ստորինից ավելի նեղ է։ Պարզունակորեն պատկերված հորինվածքը բոլորովին չի հիշեցնում Զվարթնոցը։

---

[18] E. Male, L'art religieux du XIIIe s. en France, Paris, 1898, էջ 206։

[19] Նշենք, որ այս պատկերը առկա է ոչ միայն վերջին հարթաքանդակում, երբ տապանը հասնում է Արարատ լեռան, այլ Նոյի պատմության երեք դրվագներում, մի հանգամանք, որ հաստատում է նրա խորհրդանշական իմաստը։

[20] R. de Lasteyrie. L'architecture religieuse en France a L'époque romane, Paris, 1920, էջ 727 և 738.

[21] Saint-Savin-sur-Gartempe, Poitiers քաղաքից ոչ հեռու։

Թեև Սեն-Սավենի որմնանկարի և Սենտ-Շապելի հարթաքանդակների նմանությունները սահմանափակ են, բայց որմնանկարի առկայությունը մեզ թույլ է տալիս մտածելու, որ այդ պատկերը (Նոյան տապանը և տապանի վրա բարձր, եռահարկ, գուցե բոլորակ, սյունաշարքերով և կամարաշարքերով զարդարված շենքը) կարող էր նախատիպ հանդիսանալ Սենտ-Շապելի քանդակների համար։ Եթե ընդունենք նաև, որ վերականգնողը ցանկանում էր տապանի պատմությունը կապել Քրիստոսի գերեզմանի գաղափարի հետ՝ վերջինիս միջնադարյան դրսևորմամբ, ապա հիշյալ որմնանկարին, իբր նախատիպեր, պետք է ավելացնենք գերեզմանի այցելության պատկերները, որ պահպանվել են վերևում հիշատակված փղոսկրյա կաղմերի վրա։

Սեն-Սավենի որմնանկարի գոյության փաստը, ինքնին, ավելի հավանական է դարձնում այն վարկածը, ըստ որի Սենտ-Շապելի քանդակի նմանությունը Զվարթնոցի և Գագկաշենի հետ պատահական բնույթ է կրում։

Պ. ԴՈՆԱԲԵԴՅԱՆ

(Ֆրանսիա)

АМФОРЫ ИЗ РАСКОПОК АРТАШАТА*

До недавнего времени древнегреческие амфоры, столь богато представленные в материалах из раскопок почти всех античных центров, в Армении не были известны. Отсутствовали они и среди комплексов импортной эллинистической керамики из Армавира и Гарни. Лишь с началом в 1970 г. систематического исследования древнего Арташата — столицы династии Арташесидов, стали выявляться первые их экземпляры. Сам город, находясь на перекрестке древних дорог, играл значительную роль в античной торговле. Этот факт лишний раз подтверждается богатым археологическим материалом, из года в год поступающим с его раскопок[1].

Количество амфор в общей группе импортной керамики пока невелико, однако уже сейчас они делают возможным более детальное изучение некоторых аспектов торговых связей Армении, в частности Арташата, с античным миром.

Выявленные раскопками холмов № 1, 2, 7 и 8 (нумерация экспедиции) амфоры, а также богатый подъемный материал, несмотря на плохую сохранность, располагаются по следующим группам.

Первой среди них по времени, а также по количеству экземпляров является группа родосских амфор. Следует упомянуть три фрагмента клейменых ручек. На одной из них имеется клеймо в две строки—[ΕΠ] Ι ΑΡΙΣΤΟ-ΜΑΧ[ΟΥ] (1970 г., II холм, № 44, подъемный, табл. I, рис. 1). Известны два магистрата с этим именем. Клейма первого из них относятся к началу II в. до н. э. Палеография и морфологические данные ручки нашего экземпляра позволяют причислить его к клеймам второго Аристомаха, датируемым Вирджинией Грейс концом II—началом I вв. до н. э. (VI группа)[2]. На второй ручке клеймо оттиснуто не полностью, видна лишь левая нижняя его часть. Читаются первые три буквы имени — ΝΙΚ (1970, II, № 10, подъемн., табл. I, рис. 2). Расстояния до правого обреза штампа достаточно, чтобы поместить далее еще две-три буквы, восстанавливая имя ΝΙΚΙΑ или ΝΙΚΙΟΥ. Это клеймо, вероятнее всего, принадлежит родосскому фабриканту Никию, тара которого относится к VI группе хронологической таблицы В. Грейс[3]. Клейма с именами указанных эпонима и фабриканта довольно широко распространены в ма-

* Доклад на эту тему был прочитан нами на конференции «Эйрене» в Ереване (см.: «XIV Международная конференция античников социалистических стран. Тезисы докладов», Ереван, 1976, стр. 157 — 158).

[1] См. Б. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах, «Историко-филологический журнал», 1974, № 4, стр. 44—60.

[2] V. R. Grace et M. Savvatianou-Petropoulakou, Les timbres amphoriques Grecs. Exploration archéologique de Delos, fasc. XXVII, Paris, 1970, стр. 314.

[3] Там же, стр. 311.